ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԳՆ-ՇՀԾՁԲ-11/19-23-ԱՊՖ-26

ք. Երևան «12» 05 2014 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սպասարդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոլվացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 546500 (հինգ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Պայմանագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3.1 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանված է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N 186-Ա հրամանով:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 4 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	«Սպասարդ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական N 3 շենք	ք. Երևան, Սարյան 38, բն. 51
ՀՀ Ֆինանսների Նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի	Հ/Հ 1570012422860100
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02565302
Հ/Հ 900011008266	էլ. հասցեն՝ arman_gevorgyan@yahoo.com
ՀՎՀՀ 02508046	հեռ. 099 10 00 07
աշխատակազմի ղեկավար՝	տնօրեն՝
Ա. Կիրակոսյան	Ա. Գևորգյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«12» 05 2014 թ.կնքված
N ՀՀ ԳՆ-ԵՀՇՁԲ-11/19-23- պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

Toyota Land Cruiser և Infiniti M35 մեքենաների լվացման ծառայությունների

Անվանում	Նկարագրություն
1. Ավտոլվացման կայանի գտնվելու վայրը և ներկայացվող պահանջները	ա. Ավտոլվացման կայանը պետք է գտնվի ՀՀ Կառավարական 3-րդ շենքից ոչ հեռու, քան 2.0 կմ: բ. Շինությունը պետք է ունենա փողոցի կողմից հարմարավետ մուտք և սպասարկման սպասող մեքենաների կայանատեղ: գ. Տվյալ տարածքը զբաղեցնելու և ավտոլվացման գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն: դ. Ավտոլվացման կայանը պետք է գործի շուրջօրյա և արտահերթ սպասարկի ՀՀ գյուղատնտեսության նախարարության Toyota Land Cruiser և Infiniti M35 մեքենաները
2. Մեքենաների լվացման եղանակը	Առանց հպման (ոչ խոզանակային լվացման եղանակով)
3. Անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ	ա. Բարձր և ցածր ճնշման ջրի փոշիացման սարքեր բ. Մաքրման խոզանակներ (սրահի համար), լվացող, փայլեցնող նյութեր
4. Մեքենայի լվացման հերթականություն և տևողություն	ա. Մեքենան լվանալուց առաջ, պետք է ենթարկվի նախնական լվացման՝ օգտագործելով բարձր ճնշմամբ փոշիացված փափկեցված ջուր և լվացող նյութեր: բ. Լվանալուց հետո մեքենան պետք է մաքրվի բոլոր օգտագործված ռեագենտներից (լվացող նյութերից) բարձր ճնշմամբ փոշիացված հասարակ ջրով; այնուհետև փայլեցվի (Bock հեղուկով): գ. Մեքենայի ապակիների մաքրումը և լվացումը կատարվում է սովորական ջրով, ցածր ճնշման տակ, որպեսզի ապակիներից մաքրվեն այն բոլոր միներալ նյութերը, որոնք կարող են առաջացնել նստվածքներ չորանալուց հետո: դ. Մեքենաների լրիվ (վերևից ներքև՝ տանիք, ապակիներ, դռներ, բեռնախցիկ և անվադողեր) լվացման և չորացման գործընթացը պետք է չգերազանցի սահմանված ժամանակը՝ 40 րոպե 1 մեքենայի համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ Ֆինանսների Նախարարության
աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011008266
ՀՎՀՀ 02508046
աշխատակազմի ղեկավար՝

Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սպասարդ» ՍՊԸ
ք. Երևան, Սարյան 38, բն. 51
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012422860100
ՀՎՀՀ 02565302
էլ. հասցեն: arman_gevorgyan@yahoo.com
հեռ. 099 10-00-07
տնօրեն՝

Ա. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
·12· 05. 2014 թ.կնքված
N ՀՀ ԳՆ-ՇՀԾՁԲ-11/19-23-ՁԲՊ-26 պայմանագրի

Գնման ժամանակացույց

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝
Իրականացվող ծրագիրը՝ 04. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Բաժին 01, խումբ 01, դաս 01

Իրմնարկի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Հասցեն՝ Կառավարական տուն 3

N	Գնման ենթակա ծառայությունների անվանումը			Նախատեսվում է գնել 2014թ.,		Ընդամենը	
				Տարի			
Չափաբաժին	Անվանումը	Չափման միավորը	Միավորի նախահաշվային գինը	քանակ	Ծառայությունների մատուցման վերջնաժամկետ	քանակ	գինը
1	2	3	4	5	6	7	8
1	Toyota Land Cruiser մեքենայի լվացման ծառայություններ	Դրամ	2100	120	25.12.2014թ.	120	252000
2	Infiniti M35 մեքենայի լվացման ծառայություններ	Դրամ	1900	155	25.12.2014թ.	155	294500
	Ընդամենը՝	x	x	X	x	x	546500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ Ֆինանսների Նախարարության
աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011008266
ՀՎՀՀ 02508046
աշխատակազմի ղեկավար՝
________ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սպասարդ» ՍՊԸ
ք. Երևան, Սարյան 38, բն. 51
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012422860100
ՀՎՀՀ 02565302
Էլ. հասցեն՝ arman_gevorgyan@yahoo.com
հեռ. 099 10-00-07
տնօրեն
________ Ա. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«12» 05 2014 թ.կնքված
N ՀՀ ԳՆ-ԾՁԲՊՁԲ-11/19-23-ՀՊՁ-Հ պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝
Իրականացվող ծրագիրը՝ 04. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Բաժին 01, խումբ 01, դաս 01

Ծրագիրն իրականացնող
հիմնարկի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Հասցեն՝ Կառավարական տուն 3

Չափաբաժին N	Գնման ենթակա ծառայությունների անվանումը			Նախատեսվում է վճարել 2014թ.			ընդհամենը
	Անվանումը	Չափման միավորը	Հոդված	Գումար* II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	տարի
1	2	3	4	5	6	7	8
1	Toyota Land Cruiser մեքենայի լվացման ծառայություններ	դրամ	4252	113400	189000	252000	252000
2	Infiniti M35 մեքենայի լվացման ծառայություններ	դրամ	4252	132525	220875	294500	294500
	Ընդամենը՝	x	x	X	x	x	546500

**գումարը ներկայացվում է աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ Ֆինանսների Նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011008266
ՀՎՀՀ 02508046
աշխատակազմի ղեկավար՝
_____________ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Մպասարդ» ՍՊԸ
ք. Երևան, Սարյան 38, բն. 51
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012422860100
ՀՎՀՀ 02565302
էլ. հասցեն՝ arman_gevorgyan@yahoo.com
հեռ. 099 10-00-07
տնօրեն՝
_____________ Ա. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 4
12. 05. 2014 թ.կնքված
N << ԳՆ-ԷՀՇՁԲ-11/19-23-ՀՄՊ-26 պայմանագրի

Կատարող

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20__թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.